



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆ ԱԿԱՆՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 09 (466) «08» ապրիլի 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

150	Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունը	3
	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
151	«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-7-Ն օրենքը	4
152	«Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-8-Ն օրենքը	6
153	«Արցախի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-9-Ն օրենքը	7
154	«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-10-Ն օրենքը	8
155	«Հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-11-Ն օրենքը	9
	ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ	
156	«Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի փետրվարի 17-ի ՆՀ-1151-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-620-Ն հրամանագիրը.....	10
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
157	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 14-ի N 1003-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 339-Ն որոշումը.....	11
158	«Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 341-Ն որոշումը.....	12
159	«Արցախի Հանրապետությունում բնակարանային և կոմունալ ծառայությունների աշխատողի օրը նշելու մասին» ԱՀ կառավարության N 352-Ն որոշումը.....	14
160	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 360-Ն	

	որոշումը.....	15
161	«Արցախի Հանրապետության տարածք հավի, հավի մսի և սննդային ենթամթերքի ու հավի ձվի ներմուծումը ժամանակավորապես դադարեցնելու մասին» ԱՀ կառավարության N 369-Ն որոշումը.....	16
	ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
162	«Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2021 թվականի նոյեմբերի 24-ի N 271-Ն հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 69-Ն հրամանը.....	17
163	«Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2022 թվականի փետրվարի 1-ի N 16-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 70-Ն հրամանը.....	22
164	«Արցախի Հանրապետության արդարադատության նախարարի 2020 թվականի փետրվարի 10-ի N 16-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ արդարադատության նախարարի N 33-Ն հրամանը.....	23
165	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 25-ի N 90-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 109-Ն հրամանը.....	24
166	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 8-Ն հրամանը	34
167	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրի տրամադրման մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ՆՀ-75-Ա հրամանը	36
168	«Որսի կանոնները և որսորդական վկայականի միասնական ձևը հաստատելու մասին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 52-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ բնապահպանության կոմիտեի նախագահի N 16-Ն հրամանը.....	37
	ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՈՍԲԵԿ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՑԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
169	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/1353/02/20 որոշումը.....	43

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ընդունվել է 30.03.2022թ.
Ազգային ժողովի կողմից

Հոդված 1. Արցախի Հանրապետության Սահմանադրության 173-րդ հոդվածի «հինգ» բառը փոխարինել «տասը» բառով:

Հոդված 2. Սահմանադրության սույն փոփոխությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
մարտի 30-ին

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-60-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասում «23 տարին» բառերը փոխարինել «26 տարին» բառերով:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասում «23 տարեկան» բառերը փոխարինել «26 տարեկան» բառերով:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասից հանել «՝ հինգ տարվա ընթացքում,» բառերը և երկրորդ նախադասությունը:

Հոդված 4. Օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում «արժեքը» բառից հետո լրացնել «կամ զինծառայողի անձնական գործակիցը» բառերը:

Հոդված 5. Օրենքի 55-րդ հոդվածում՝

1) 12-րդ մասում «2020 թվականի հոկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «2021 թվականի հունվարի 1-ը» բառերով, «կարող է վերսկսվել» բառերը փոխարինել «վերսկսվում է» բառերով, իսկ «2021 թվականի հոկտեմբերի 1-ը» բառերը՝ «2022 թվականի հոկտեմբերի 1-ը» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ մաս.

«15. Եթե անձը մինչև 2022 թվականի հոկտեմբերի 1-ը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով բռնազավթված տարածքներում աշխատած ժամանակահատվածը աշխատանքային ստաժում հաշվառելու մասին՝ սույն օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասում նշված հանձնաժողովի որոշումը, ապա նրան վճարվում են նաև կենսաթոշակի իրավունքը ծագելու օրվանից չստացած կենսաթոշակի գումարները, սակայն ոչ ավելի վաղ, քան 2020 թվականի հոկտեմբերի 1-ից:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի, որի գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: Եթե մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու կամ կենսաթոշակի տեսակը հաշմանդամության զինվորական կենսաթոշակի փոխելու դիմումը մերժվել է զինվորական ծառայության հետ հաշմանդամության (հիվանդության, խեղման) պատճառով կապը զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հինգ տարի հետո սահմանելու (որոշելու) հիմքով, ապա հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է (կենսաթոշակի տեսակը փոխվում է)

1) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից, եթե անձը կրկին դիմում է մինչև 2023 թվականի հունվարի 1-ը:

2) դիմելու օրվանից, եթե անձը կրկին դիմում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 1
Ստեփանակերտ
ՀՕ-7-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
մարտի 30-ին

**«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2018 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՕ-51-Ն օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում «23 տարին» բառերը փոխարինել «26 տարին» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 1
Ստեփանակերտ
ՀՕ-8-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
մարտի 30-ին

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արցախի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-78-Ն օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասում «թոշակառու է (չի զբաղեցնում պետական և համայնքային պաշտոն կամ չի կատարում վճարովի այլ աշխատանք)» բառերը փոխարինել «կենսաթոշակառու է և չի զբաղեցնում պետական կամ համայնքային պաշտոն» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 1
Ստեփանակերտ
ՀՕ-9-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
մարտի 30-ին

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային անվտանգության մարմինների մասին» 2003 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-75 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի երկրորդ մասում «մարմիններ» բառից հետո լրացնել «և մարտական ստորաբաժանումներ» բառերը:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածում «գորքերը» բառից հետո լրացնել «և լիազորված մարմնի համակարգում գործող մարտական ստորաբաժանումները» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 1
Ստեփանակերտ
ՀՕ-10-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
մարտի 30-ին

**«ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հարկադիր կատարման մասին» 1999 թվականի մարտի 24-ի ՀՕ-66 օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի «Ժ» կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «Ժա» կետ.

«Ժա) 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, ինչպես նաև բարեգործական և (կամ) մարդասիրական կազմակերպությունների կողմից՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ որպես աջակցություն (բացառությամբ փոխհատուցումների):»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 1
Ստեփանակերտ
ՀՕ-11-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ՆՀ-1151-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի փետրվարի 17-ի «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետության որոշ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չանցկացնելու մասին» ՆՀ-1151-Ն հրամանագրի՝

1) վերնագրում «ՈՐՈՇ» բառը փոխարինել «ԲՈՒՆԱԶԱՎԹՎԱԾ» բառով.

2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Արցախի Հանրապետության բռնազավթված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չանցկացնել՝ մինչև այդ համայնքներում Արցախի Հանրապետության ինքնիշխանության և իրավագործության վերականգնումը:»:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 8
Ստեփանակերտ
ՆՀ-620-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 մարտի 2022թ.

N 339-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1003-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**։

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 14-ի «Արցախի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի 2021 թվականի պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 1003-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման և որոշմամբ հաստատված հավելվածի ծրագրի վերնագրերից հանել «2021 ԹՎԱԿԱՆԻ» բառերը.

2) որոշման 1-ին կետից հանել «2021 թվականի» բառերը.

3) որոշմամբ հաստատված հավելվածի ծրագրի 3-րդ պարբերության «Արցախի Հանրապետությունում» բառերից հետո լրացնել « 2021 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ,» բառերը.

4) որոշմամբ հաստատված հավելվածի ծրագրի 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«14. Ծրագրից ակնկալվող արդյունքներն են՝

1) ապահովել Արցախի Հանրապետության շրջաններում SS ոլորտում զբաղված անձանց թվի ավելացումը՝ ըստ տարիների՝

ա. 2022 թվականին՝ նվազագույնը 30 հոգով,

բ. 2023 թվականին՝ նվազագույնը 60 հոգով,

գ. 2024 թվականին՝ նվազագույնը 90 հոգով.

2) ապահովել Արցախի Հանրապետությունում SS ոլորտի արտադրանքի և ծառայությունների ծավալի առնվազն 10% աճ.

3) ապահովել SS ոլորտի մասնագիտություններով վերաորակավորման ծրագրերի դիմողների հետևյալ քանակը ըստ տարիների՝

ա. 2022 թվականին՝ առնվազն 600 դիմող,

բ. 2023 թվականին՝ առնվազն 1200 դիմող,

գ. 2024 թվականին՝ առնվազն 1800 դիմող:».

5) որոշմամբ հաստատված հավելվածի ծրագրի 15-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«15. Ծրագիրն իրականացվում է յուրաքանչյուր տարվա համար Արցախի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:».

6) որոշմամբ հաստատված հավելվածի ծրագրի 16-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 մարտի 2022թ.

N 341-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է**.

1. «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 10-ի «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՍԵՐ ադ թվում՝	-	-	-	-
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	2		Ծերություն	6 000,0	12 000,0	18 000,0	24 000,0
		1	Ծերություն	6 000,0	12 000,0	18 000,0	24 000,0
		02	Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	6 000,0	12 000,0	18 000,0	24 000,0
			ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարություն	6 000,0	12 000,0	18 000,0	24 000,0
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	(6 000,0)	(12 000,0)	(18 000,0)	(24 000,0)
			ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարություն	(6 000,0)	(12 000,0)	(18 000,0)	(24 000,0)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 ապրիլի 2022թ.

N 352-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂԻ
ՕՐԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 24-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետությունում ապրիլ ամսվա երրորդ շաբաթ օրը նշել որպես բնակարանային և կոմունալ ծառայությունների աշխատողի օր:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 ապրիլի 2022թ.

N 360-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի «Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական հումք վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» N 49-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) 1-ին կետում, 3-րդ կետի 1-ին ենթակետում և 5-րդ կետում «ներմուծված գյուղատնտեսական հումքի» բառերից հետո լրացնել «, չռաֆինացված ձեթի և յուղատու մշակաբույսերի սերմերից ու պտուղներից ստացված քուսպի» բառերը.

2) 7-րդ կետում «ֆինանսների» բառից հետո լրացնել «և էկոնոմիկայի» բառերը.

3) 11-րդ կետում «հումքը» բառից հետո լրացնել «, չռաֆինացված ձեթը և յուղատու մշակաբույսերի սերմերից ու պտուղներից ստացված քուսպը» բառերը, իսկ «այդ հումքից» բառերը փոխարինել «դրանցից» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ 1-ին կետի 2-րդ ենթակետի:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 ապրիլի 2022թ.

N 369-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՀԱՎԻ, ՀԱՎԻ ՄՍԻ ԵՎ
ՄՆԱԴԱՅԻՆ ԵՆԹԱՍԹԵՐՔԻ ՈՒ ՀԱՎԻ ՉՎԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **նրռռու՛ է**:

1. 2022 թվականի ապրիլի 10-ից մինչև մայիսի 30-ը ներառյալ դադարեցնել Արցախի Հանրապետության տարածք ԱՏԳ ԱԱ 0105, 0207 և 0210 ծածկագրերով ապրանքային դիրքում դասակարգված համապատասխանաբար հավի, հավի մսի և սննդային ենթամթերքի ու 040721000 ծածկագրով ապրանքային ենթադիրքում դասակարգված հավի ձվի ներմուծումը, բացառությամբ ինկուբացիոն նպատակով ներմուծվող հավի ձվի և մինչև 90 օրական հավի ճտի, որոնց ներմուծումն իրականացվում է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից տրված թույլտվության հիման վրա:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում հաստատել Արցախի Հանրապետության տարածք ինկուբացիոն նպատակով հավի ձվի և մինչև 90 օրական հավի ճտի ներմուծման թույլտվության տրամադրման կարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2022 թվականի ապրիլի 4-ի

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 24-Ի N 271-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 69-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը.

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

1. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2021 թվականի նոյեմբերի 24-ի «Արցախի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող Սկ N 3.1.2-001-21 սանիտարական կանոնները հաստատելու մասին» N 271-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Հրամանի հավելված 1-ի 13-րդ, հավելված 2-ի 30-րդ, հավելված 3-ի 22-րդ, հավելված 4-ի 23-րդ, հավելված 5-ի 21-րդ, հավելված 6-ի 20-րդ, հավելված 7-ի 22-րդ, հավելված 8-ի 15-րդ, հավելված 9-ի 20-րդ, հավելված 10-ի 21-րդ, հավելված 11-ի 27-րդ, հավելված 12-ի 20-րդ, հավելված 13-ի 7-րդ, հավելված 14-ի 30-րդ, հավելված 15-ի 24-րդ, հավելված 16-ի 19-րդ, հավելված 17-ի 6-րդ, հավելված 18-ի 12-րդ, հավելված 19-ի 22-րդ, հավելված 20-ի 23-րդ, հավելված 21-ի 11-րդ, հավելված 22-ի 16-րդ, հավելված 23-ի 20-րդ և հավելված 24-ի 7-րդ կետերում «նրա համար աշխատանքը 14 օրյա ժամկետով կազմակերպվում է հեռավար եղանակով» բառերը փոխարինել «նրա համար աշխատանքը կազմակերպվում է հեռավար եղանակով՝ պատվաստանյութի կիրառման հրահանգի համաձայն սահմանված դեղաչափերով (դեղաչափով) ամբողջական պատվաստված անձանց համար 7 օրացուցային օրով, իսկ չպատվաստված անձանց համար՝ 10 օրացուցային օրով» բառերով.

2) Հրամանի հավելվածներ 1-ի, 2-ի, 3-ի, 4-ի, 5-ի, 6-ի, 7-ի, 9-ի, 10-ի, 11-ի, 13-ի, 14-ի, 16-ի, 17-ի, 18-ի, 19-ի, 20-ի, 21-ի, 22-ի, 23-ի, 24-ի Ձև 2-ից, հավելված 12-ի Ձև 4-ից և հավելված 15-ի Ձև 3-ից հանել «պարտադիր» բառը.

3) Հրամանի հավելված 1-ում.

ա. 11-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 23-րդ կետում «դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձինք կրում են դիմակ» բառերով.

4) Հրամանի հավելված 2-ում.

ա. 6-րդ կետի 1-ին և 5-րդ ենթակետերն և 17-րդ, 27-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

բ. 19-րդ կետում «աշխատողների և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «աշխատողները և այցելուները կրում են դիմակ» բառերով.

գ. 33-րդ կետից հանել «պարտադիր» բառը.

5) Հրամանի հավելված 3-ում.

ա. 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 18-րդ կետի 1-ին նախադասությունը «կրում է դիմակ» բառերից հետո լրացնել՝ «համաձայն Առողջապահության նախարարի 2022 թվականի

փետրվարի 1-ի N 16-Ն հրամանի՝ փոխելով այն 3-4 ժամը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության» բառերով.

գ. 25-րդ կետում «դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձինք կրում են դիմակ» բառերով.

6) Հրամանի հավելված 4-ում.

ա. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 16-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

գ. 28-րդ կետից հանել «դիմակներով և» բառը.

7) Հրամանի հավելված 5-ում.

ա. 5-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 7-րդ կետում «անձնակազմի և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձնակազմը և այցելուները կրում են դիմակ» բառերով.

8) Հրամանի հավելված 6-ում.

ա. 13-րդ կետում «դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձինք կրում են դիմակ» բառերով.

բ. 15-րդ կետից հանել «դիմակով՝ ելնելով աշխատանքային հերթափոխի տևողությունից և դիմակը առնվազն 3-4 ժամը 1 անգամ փոխելու հաշվարկից» բառերը.

գ. 19-րդ կետից հանել «մշտապես» բառը.

9) Հրամանի հավելված 7-ում.

ա. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

գ. 25-րդ կետից հանել «դիմակներով» բառը.

դ. 27-րդ կետից հանել «պարտադիր» բառը.

ե. 31-րդ կետի 7-րդ ենթակետից հանել «պարտադիր» բառը.

10) Հրամանի հավելված 8-ի 17-րդ կետի 7-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել.

11) Հրամանի հավելված 9-ում.

ա. 9-րդ կետի 1-ին ենթակետից հանել «ինչպես նաև անձնակազմի ջերմաչափման արդյունքների» բառերը.

բ. 14-րդ կետում «աշխատողների և այցելուների համար դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «աշխատողները և այցելուները կրում են դիմակ» բառերով.

գ. 19-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «, դիմակների» բառերը.

12) Հրամանի հավելված 10-ում.

ա. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 14-րդ կետից հանել «դիմակով» բառը.

գ. 17-րդ կետից հանել «և թափոնների հեռացման համար «Օգտագործված դիմակներ» մակնշմամբ, կափարիչի ոտնակային կամ սենսորային կառավարմամբ աղբամաններով» բառերը.

դ. 25-րդ կետից հանել «պարտադիր» բառը.

ե. 26-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

13) Հրամանի հավելված 11-ում.

ա. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 15-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

գ. 25-րդ և 28-րդ կետերից հանել «պարտադիր» բառը.

14) Հրամանի հավելված 12-ում.

ա. 5-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «ինչպես նաև անձնակազմի և երեխաների ջերմաչափման արդյունքների,» բառերը և «Ձև 2-ի, Ձև 3-ի» բառերը.

բ. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների,» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

գ. ուժը կորցրած ճանաչել 18-րդ և 22-րդ կետերը, Ձև 2-ը և Ձև 3-ը.

դ. 28-րդ կետում «երեխաների, անձնակազմի և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «երեխաները, անձնակազմը և այցելուները կրում են դիմակ» բառերով.

ե. 30-րդ կետի «14 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «10 օրվա ընթացքում» բառերով.

15) Հրամանի հավելված 13-ում.

ա. 6-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

բ. 16-րդ կետի 1-ին ենթակետում «վարորդների դիմակի կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «վարորդները կրում են դիմակ» բառերով.

գ. 17-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «ինչպես նաև դիմակների,» բառերը.

դ. 30-րդ կետի 1-ին ենթակետում «վարորդների դիմակի կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «վարորդները կրում են դիմակ» բառերով.

16) Հրամանի հավելված 14-ում.

ա. 5-րդ կետի 1-ին և 5-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

բ. 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

գ. 19-րդ կետում «աշխատողների և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «աշխատողները և այցելուները կրում են դիմակ» բառերով.

դ. 26-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

ե. 32-րդ կետից հանել «պարտադիր» բառը.

17) Հրամանի հավելված 15-ում.

ա. 14-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների,» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 28-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

գ. 36-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

դ. 44-րդ կետում «դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձինք կրում են դիմակ» բառերով.

18) Հրամանի հավելված 16-ի 15-րդ կետում «դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձինք կրում են դիմակ» բառերով.

19) Հրամանի հավելված 17-ում.

ա. 7-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների,» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 18-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

գ. 20-րդ կետում «ուսանողների, անձնակազմի և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «ուսանողները, անձնակազմը և այցելուները կրում են դիմակ» բառերով.

դ. 23-րդ կետի «վերջին 14 օրերի» բառերը փոխարինել «վերջին 10 օրերի» բառերով.

ե. 35-րդ կետի «14 օրյա ժամկետով» բառերը փոխարինել «10-օրյա ժամկետով» բառերով.

գ. 39-րդ կետից հանել «պարտադիր» բառը.

20) Հրամանի հավելված 18-ում.

ա. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների,» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 19-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

գ. 27-րդ կետում «սովորողների, անձնակազմի և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «սովորողները, անձնակազմը և այցելուները կրում են դիմակ» բառերով.

դ. 29-րդ կետում «14 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «10 օրվա ընթացքում» բառերով.

21) Հրամանի հավելված 19-ում.

ա. 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 20-րդ կետում «անձնակազմի և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձնակազմը և այցելուները կրում են դիմակ» բառերով.

22) Հրամանի հավելված 20-ում.

ա. 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 21-րդ կետում «անձնակազմի և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձնակազմը և այցելուները կրում են դիմակ» բառերով.

23) Հրամանի հավելված 21-ում.

ա. 14-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 15-րդ կետից հանել «, «Օգտագործված դիմակներ» մակնշմամբ, կափարիչի ոտնակային կամ զգայական (սենսոր) կառավարմամբ աղբարկղեր» բառերը.

գ. 16-րդ կետում «կոլեկտիվի, անձնակազմի և այցելուների շրջանում բոլոր հնարավոր դեպքերում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձնակազմը և այցելուները կրում են դիմակ» բառերով.

դ. 29-րդ կետում «դիմակի կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «անձինք կրում են դիմակ» բառերով.

24) Հրամանի հավելված 22-ում.

ա. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 17-րդ կետում «սովորողների, անձնակազմի և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «սովորողները, անձնակազմը և այցելուները կրում են դիմակ» բառերով.

25) Հրամանի հավելված 23-ում.

ա. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 14-րդ կետից հանել «դիմակով» բառը.

գ. 24-րդ կետից հանել «պարտադիր» բառը.

26) Հրամանի հավելված 24-ում.

ա. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «դիմակների» բառը, իսկ 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ. 16-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

գ. 18-րդ կետում «սովորողների, անձնակազմի և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է» բառերը փոխարինել «սովորողները, անձնակազմը և այցելուները կրում են դիմակ» բառերով.

դ. 21-րդ կետում «14 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «10 օրվա ընթացքում» բառերով.

ե. 31-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«31. Սովորողը չի հաճախում Հաստատություն, եթե առկա է ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումը, երբ՝

1) սովորողն ունի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ռիսկի խմբի հիվանդություններից և(կամ) վիճակներից որևէ մեկը՝ համաձայն Առողջապահության նախարարության կողմից ներկայացված ցանկի՝

ա. նորագոյացություններ,

բ. արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդություններ, սակավարյունություն, արյան մակարդման համակարգի խանգարումներ, իմուն խանգարումներ,

գ. ներզատական համակարգի հիվանդություններ, սնուցման և նյութափոխանակության խանգարումներ, շաքարախտ, ճարպակալում,

վահանագեղձի և այլ էնդոկրին օրգանների հիվանդություններ, սնուցման ծանր խանգարումներ, մեթաբոլիկ հիվանդություններ,

դ. հոգեկան կամ վարքի խանգարումներ, աուտիզմ, օրգանական ախտահարումներ, շիզոֆրենիա, աֆեկտիվ վիճակներ, ներոտիկ վիճակներ, մտավոր հետամնացություն, հոգեբանական, վարքագծային և հուզմունքային այլ խանգարումներ,

ե. նյարդային համակարգի հիվանդություններ՝ մանկական ուղեղային կաթված, էպիլեպսիա, ատրոֆիկ և դեգեներատիվ ախտահարումներ, գլխուղեղի անոթային հիվանդություններ,

զ. արյան շրջանառության հիվանդություններ՝ ռևմատիկ տենդ, զարկերակային գերճնշում, սրտի բորբոքային հիվանդություններ, կարդիոմիոպաթիաներ, սրտային անբավարարություն,

է. շնչառական օրգանների հիվանդություններ՝ աթթմա, վերին և ստորին շնչուղիների քրոնիկ հիվանդություններ, շնչառական անբավարարություն,

ը. մարսողական համակարգի հիվանդություններ՝ աղիների բորբոքային հիվանդություններ, լյարդի քրոնիկ հիվանդություններ,

թ. ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ, համակարգային շարակցահյուսվածքային հիվանդություններ, հոդաբորբեր,

ժ. միզասեռական համակարգի հիվանդություններ՝ գլոմերուլյար հիվանդություններ, երիկամային անբավարարություն,

ժա. բնածին զարգացման արատներ, անոմալիաներ՝ ներառյալ որևէ օրգանի ձևափոխումներ, ֆունկցիայի արտահայտված խանգարումով:

2) սովորողի տանն առկա է կամ հայտնաբերվել է կորոնավիրուսային հիվանդությանը (COVID-19) բնորոշ ախտանշաններով կասկածելի կամ հաստատված դեպք՝ սույն հավելվածի 34-րդ կետում սահմանված ժամկետով:».

գ. 34-րդ կետում «14 օրյա ժամկետով» բառերը փոխարինել «10-օրյա ժամկետով» բառերով.

է. 40-րդ կետից հանել «պարտադիր» բառը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Մ. ՀԱՅՐԻՅԱՆ

2022 թվականի ապրիլի 4
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2022 թվականի ապրիլի 4-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 16-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 70-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2022 թվականի փետրվար 1-ի «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման կարգն ու պայմանները, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 16-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հավելված 1-ի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Փակ տարածքներում խորհուրդ է տրվում կրել դիմակ փոխելով այն 3-4 ժամը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության:».

2) հավելված 2-ի 2-րդ կետից հանել «պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև» բառերը.

3) հավելված 2-ի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Մ. ՀԱՅՐԻՅԱՆ

2022 թվականի ապրիլի 4
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2022 թվականի մարտի 31-ի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 16-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 33-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարի 2020 թվականի փետրվարի 10-ի «Հարկադիր կատարողին արտաժամյա ծառայության ներգրավման դեպքերը և ժամանակի հաշվարկման կարգը սահմանելու մասին» N 16-Ն հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հրամանի նախաբանում «Դատական ակտերի հարկադիր» բառերը փոխարինել «Հարկադիր» բառով.

2) հրամանում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետ.

«2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Կ. Քոչարյանին:».

3) հրամանով սահմանված հավելվածի՝

ա. 1-ին կետից հանել «դատական ակտերի» բառերը,

բ. 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«3. Արտաժամյա ծառայության վերաբերյալ հարկադիր կատարողի վերադասի կողմից կազմվում է համապատասխան զեկուցագիր և ներկայացվում հարկադիր կատարումն ապահովող ծառայության հաշվապահություն՝ համապատասխան հաշվարկներ կատարելու համար: Զեկուցագիրը համապատասխան հաշվարկով ներկայացվում է Գլխավոր հարկադիր կատարողի համաձայնեցմանը, որից հետո այն ուղարկվում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հաստատման և վճարումներ կատարելու նպատակով:».

գ. 4-րդ կետում «օրենքով» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով, իսկ «կարգով» բառից հետո լրացնել « տվյալ ամսվա աշխատավարձի հետ» բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԺԻՐԱՅՐ ՄԻՐԶՈՅԱՆ

2022 թվականի մարտի 31
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

1 ապրիլի 2022թ.

N 109-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 90-Ն
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 4-ի N 74-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 90-Ն հրամանում (այսուհետև՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ, ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱԿԱՑԱԾ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՋՈՐԴ ԴԱՄԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ» բառերով,

2) Հրամանի նախաբանում «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը,

3) Հրամանի 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական պարապմունքներից բացակայություններ ունեցող սովորողների հետագա ուսումնառության կարգը» բառերով,

4) Հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱԿՈՒՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի ապրիլի 1-ի N 109-Ն հրամանի

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2013 թվականի ապրիլի 25-ի N 90-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑՈՒՐԱՑՄԱՆ ԱՍՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՍ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈՒՍԴՐՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌԻՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) սովորողների (այսուհետ՝ սովորող) կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական պարապմունքներից բացակայություններ ունեցող սովորողների հետագա ուսումնառության, ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդների ներկայացման, մեդալի հավակնորդների քննությունների կազմակերպման և պարզևատրման հետ կապված հարաբերությունները:

2. ՍՈՎՈՐՈՂԻ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴԱՍԱՐԱՆ ՓՈՒՍԴՐՈՒՄԸ ԵՎ ԱՎԱՐՏՈՒՄԸ

2. 1-ին դասարանում սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան՝ գիտելիքների անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով՝ բնութագրման միջոցով: Առանձին դեպքերում սովորողը կարող է կրկնել տվյալ ուսումնական տարվա դասընթացը՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումի, դասվարի հիմնավորված առաջարկության և Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ:

3. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: Բնտելեկտուալ (մտավոր) հետամնացությամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա:

4. Հաստատությունների 10-րդ և 11-րդ դասարանների սովորողները փոխադրվում են հաջորդ դասարան փոխադրական քննությունների միջոցով, որոնք անցկացվում են գրավոր կամ բանավոր Հաստատության հայեցողությամբ և սահմանած ժամանակացույցի համաձայն: Քննական առաջադրանքները մշակվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից: Փոխադրական քննությունները գնահատվում են՝

1) գրավորը՝ 20 միավորային համակարգում.

2) բանավորը՝ 10 միավորային համակարգում:

5. Փոխադրական քննությունները գրավոր 8-20 (բանավորի դեպքում՝ 4-10) միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: Գրավոր 1-7 (բանավորի դեպքում՝ 1-3) միավոր գնահատված սովորողը վերաքննություններ է հանձնում օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում:

6. 4-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և

գիտելիքների ստուգումից 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

7. 9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի երկրորդ աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր և ավարտական բոլոր քննություններից 4-10 և 8-20 միավոր գնահատված սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական:

8. 12-րդ դասարանում (հանրակրթական հիմնական ծրագրերի երրորդ աստիճանի ավարտական դասարան) հունվար կամ հունիս ամիսներին ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 և պետական ավարտական բոլոր քննություններից 8-20 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:

9. Ինտելեկտուալ (մտավոր) հետամնացությամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

10. Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ նշանակում են դասավանդող ուսուցիչները ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում: Տարեկան գնահատականները որոշվում են կիսամյակային գնահատականների հանրագումարների միջինացման արդյունքում:

11. «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունն ավարտելու վրա:

12. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10, միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների՝ նաև 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից 9-10 կամ 18-20, 4-րդ դասարանում տարեկան և գիտելիքների ստուգումից 9-10, 9-րդ և 12-րդ դասարաններում տարեկան 9-10, ավարտական, պետական ավարտական քննություններից 9-10 և 18-20 միավոր գնահատված սովորողները պարզևատրվում են Նախարարության գովասանագրով:

13. 8-րդ և 9-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից չգնահատված հիմնական դպրոցի սովորողը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը,

2) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և Արցախի Հանրապետություն վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը,

3) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը:

3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՍՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

14. 4-րդ դասարանում անցկացվում է գիտելիքների ստուգում՝ «Մայրենի» (գրավոր) և «Մաթեմատիկա» (գրավոր) առարկաներից, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար նաև «Ռուսաց լեզու» (բանավոր): Առաջադրանքները կազմվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից, Գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կողմից հաստատված ուղեցույցերի համաձայն:

15. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» առարկայի թեստերը կազմվում են ռուսերենով:

16. 4-րդ դասարանի՝ տարեկան կամ գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված լինելու կամ գիտելիքների ստուգմանը չներկայանալու դեպքերում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում երեքը, սովորողը հանձնում է

վերաքննություն՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կազմած առաջադրանքների հիման վրա:

17. Գիտելիքների ստուգման ենթակա առարկայից տարեկան 1-3 գնահատված լինելու դեպքում սովորողը չի մասնակցում տվյալ առարկայից գիտելիքների ստուգմանը:

18. 4-րդ դասարանի սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե՝

1) սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքերի ընդհանուր թիվը գերազանցում է երեքը,

2) չի ներկայացել վերաքննության կամ վերաքննությունների արդյունքում առնվազն մեկ առարկայից ստացել է 1-3 միավոր:

19. 9-րդ դասարանում անցկացվում են ավարտական քննություններ հետևյալ առարկաներից.

1) **Հայոց լեզու** (կենտրոնացված՝ ԳԹԿ կողմից հաստատված քննական կենտրոնում, գրավոր): Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ավարտական քննությունները կարող են հանձնել իրենց Հաստատությունում կամ կենտրոնացված՝ ըստ սովորողների ընտրության՝ իրենց կարիքին համապատասխան հարմարեցումների ապահովմամբ,

2) **Մաթեմատիկա** (հանրահաշիվ, երկրաչափություն) (կենտրոնացված՝ ԳԹԿ կողմից հաստատված քննական կենտրոնում, գրավոր): Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ավարտական քննությունները կարող են հանձնել իրենց Հաստատությունում կամ կենտրոնացված՝ ըստ սովորողների ընտրության՝ իրենց կարիքին համապատասխան հարմարեցումների ապահովմամբ,

3) **Գրականություն** (բանավոր),

4) Օտար լեզու (Ռուսերեն, Անգլերեն, Ֆրանսերեն, Գերմաներեն, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ, բանավոր),

5) Բնագիտություն (Ֆիզիկա, Քիմիա, Կենսաբանություն, Աշխարհագրություն առարկաներ սովորողի ընտրությամբ, գրավոր): 2022-2023 ուսումնական տարվանից՝ լաբորատոր փորձերի հիման վրա՝ բանավոր,

6) Հայոց պատմություն (բանավոր),

7) Ֆիզկուլտուրա (նորմատիվների հանձնում),

8) «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր)՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար:

20. Բանավոր քննությունները կարող են կազմակերպվել 2 և ավելի օրերի ընթացքում՝ կախված Հաստատության սովորողների թվից:

21. Սույն կարգի 19-րդ կետի 3-8-րդ կետերով սահմանված առարկաների քննությունները սովորողները հանձնում են իրենց Հաստատությունում:

22. Ռուսերենով ուսուցմամբ 9-րդ դասարանների սովորողների համար «Ռուս գրականություն» առարկայի առաջադրանքները կազմվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից:

23. «Ֆիզկուլտուրա» 9-րդ դասարանների առարկայի ավարտական քննությունն անցկացվում է նորմատիվների հանձնմամբ՝ 10 միավորային համակարգում:

24. 9-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ ավարտական քննություններից 1-3 կամ 1-7 միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում չորսը, վերաքննություն է հանձնում իր Հաստատությունում (բացառությամբ սույն կարգի 19-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված քննական առարկաների) օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: 9-րդ դասարանի սովորողի հետագա ուսուցման առանձնահատուկ դեպքերում հնարավոր է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) որոշմամբ վերաքննության ժամանակահատվածի փոփոխություն:

25. 9-րդ դասարանի սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե սույն կարգի 24-րդ կետով նախատեսված դեպքերի ընդհանուր թիվը գերազանցում է չորսը կամ չի ներկայացել վերաքննության կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-3 կամ 1-7 միավոր:

26. 12-րդ դասարանում հունվար կամ հունիս ամիսներին անցկացվում են պետական ավարտական քննություններ հետևյալ առարկաներից.

1) **Հայոց լեզու և հայ գրականություն** (գրավոր),

2) **Մաթեմատիկա** (գրավոր),

3) **Հայոց պատմություն** (գրավոր),

4) «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր)՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար:

27. Եթե 12-րդ դասարանի սովորողը առողջական խնդրի պատճառով հունվար ամսին չի մասնակցել պետական ավարտական որևէ քննության, ապա տվյալ առարկայից պետական ավարտական քննությունը պետք է հանձնի հունիսին:

28. Հունվար ամսին պետական ավարտական որևէ քննությունից 1-7 միավոր գնահատված լինելու դեպքում 12-րդ դասարանի սովորողը տվյալ առարկայից պետական ավարտական քննությունը պետք է հանձնի հունիսին:

29. Պետական ավարտական որևէ քննական առարկայից անբավարար գնահատված լինելու դեպքում 2-րդ կիսամյակում տվյալ առարկան տվյալ սովորողի համար դառնում է պարտադիր ուսումնասիրության առարկա:

30. Ռուսերենով ուսուցմամբ 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկաների թեստերը կազմվում են ռուսերենով:

31. Ավարտական և պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից:

32. Ռուսերենով ուսուցմամբ 12-րդ դասարանների համար «Ռուս գրականություն» առարկայի առաջադրանքները կազմվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից:

33. «Ֆիզկուլտուրա» 12-րդ դասարանների առարկայի ստուգարքն անցկացվում է նորմատիվների հանձնմամբ՝ որևէ քննաշրջանի ընթացքում:

34. 12-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու կամ հունիս ամսին նախատեսված քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում երեքը, վերաքննություն է հանձնում իր Հաստատությունում հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: Առաջադրանքները կազմվում են սույն կարգի 30-33-րդ կետերի պահանջներին համապատասխան:

35. 19 տարին չլրացած 12-րդ դասարանի սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-3 կամ 1-7 միավոր:

36. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հանրահաշիվ» կամ «Երկրաչափություն» կամ «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում «Մաթեմատիկա» առարկայի ավարտական, պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն՝ 12-րդ դասարանի սովորողները՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում, իսկ 9-րդ դասարանների սովորողները՝ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

37. Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան և «Մաթեմատիկա» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

38. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ավարտական, պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն՝ 9-րդ դասարանի սովորողները՝ օգոստոսի 20-30-ը, 12-րդ դասարանի սովորողները՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

39. Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

40. Եթե 9-րդ կամ 12-րդ դասարանի սովորողը «Հայոց լեզու», «Հայ գրականություն» կամ «Գրականություն», «Հայոց պատմություն» առարկաներն ուսումնասիրել է վերջին երկու ուսումնական տարիներին, ապա հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում այդ առարկայի համապատասխան տողում, սովորողի ցանկությամբ, կարող են գրվել՝ «չի ուսումնասիրել» բառերը: Տվյալ դեպքում սովորողն իր ցանկությամբ կարող է ազատվել 9-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» առարկաների և 12-րդ

դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» առարկաների ավարտական, պետական ավարտական քննություններին: Այդ դեպքում ավարտական փաստաթղթի համապատասխան տողում գրվում է՝ «ազատված է»:

41. 19 տարին լրացած՝ առնվազն 1 ուսումնական առարկայից տարեկան 1-3 կամ քննական 1-7 միավոր գնահատված (այդ թվում՝ վերաքննության արդյունքներով), ավարտական, պետական ավարտական քննություններին չմասնակցած 9-րդ կամ 12-րդ դասարանների սովորողները դուրս են մնում Հաստատությունից:

42. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի արական սեռի սովորողները Հաստատությունից դուրս մնալու դեպքում իրավունք ունեն քննություն(ներ) հանձնել և հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալ:

1) ընթացիկ տարվա ամառային գորակոչին զինվորական ծառայության մեկնածները՝ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում՝ գորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում,

2) ծառայության ընթացքում՝ գորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում, ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում,

3) գորացրվելուց անմիջապես հետո իրենց ուսումնառած Հաստատությունում՝ ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում:

43. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի իգական սեռի, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության չգորակոչված քաղաքացիներին իրավունք է վերապահվում հաջորդ տարի նույն Հաստատությունում հանձնել քննություններ այդ առարկաներից, իսկ նոր բնակավայր տեղափոխվելու դեպքում՝ այդ բնակավայրում գտնվող Հաստատություններից մեկում:

44. Հաստատությունում որևէ առարկա չդասավանդվելու պատճառով տվյալ առարկայից գնահատական չունեցող սովորողն իր ցանկությամբ այդ առարկայից կարող է քննություն հանձնել էքստեռն կարգով մինչև տվյալ ուսումնական տարվա ավարտը: Այդ քննության արդյունքը հիմք է միջնակարգ կրթության ատեստատում տարեկան, իսկ քննական առարկայի դեպքում՝ քննական և տարեկան գնահատականներ նշանակելու համար:

45. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարաններում (այդ թվում՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից) մինչև 3 առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողի փոխադրման հարցը որոշվում է օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում, վերաքննությունների հանձնումից հետո: Վերաքննությունների առաջադրանքները մշակվում են Հաստատության համապատասխան առարկայական մեթոդական միավորման կողմից:

46. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում վերաքննության արդյունքում 1 կամ 2 առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ,

2) ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի 1-3 միավոր գնահատված առնվազն մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում:

47. Վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է 46-րդ կետում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

48. Սույն կարգի 46-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պայմաններով փոխադրվող կամ սույն կարգով սահմանված վերաքննություններ հանձնող սովորողի համար ուսուցում կազմակերպելու նպատակով Հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագիտական խումբ:

49. Հիմք ընդունելով առարկայական մասնագիտական խմբի կարծիքը և առաջարկությունները սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին՝ Հաստատության տնօրենը հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական ուսուցման ծրագրեր և լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց:

50. Սովորողին ամառային առաջադրանք տալու կամ դասընթացը կրկնելու վերաբերյալ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին, տնօրենի հանձնարարությամբ, սովորողի ծնողին (օրինական ներկայացուցչին) տեղյակ է

պահում դաստիարակման մանկավարժական խորհրդի նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ:

51. 2-12-րդ դասարանների երեքից ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողները (մինչև 19 տարին լրանալը) չեն փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

52. Հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների գիտելիքների ստուգումը, ավարտական և պետական ավարտական, այդ թվում՝ ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Մեդալի հավակնորդների քննությունների կազմակերպումն ու անցկացումն իրականացվում է սույն կարգի և Նախարարի՝ տվյալ ուսումնական տարվա համար հաստատած սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամկետների և անցկացման կարգի համաձայն:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՍՈՒՆՔՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅՈՒՆԸ

53. Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում և ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտից առավելագույնը 10 օր առաջ:

54. Հաստատության մանկավարժական խորհուրդը կազմում և տնօրենի հաստատմանն է ներկայացնում տեղեկանք՝ 2-12-րդ դասարանների սովորողների բացակայությունների քանակի, դրանց բնույթի վերաբերյալ:

55. 10-12-րդ դասարանների սովորողների բացակայությունների մասին տեղեկատվությունը, մանկավարժական նիստում քննարկելուց հետո, Հաստատության տնօրենի կողմից ներկայացվում է Նախարարություն և ԳԹԿ:

56. Ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ դասերից բացակայած 2-12-րդ դասարանների սովորողների հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում՝ մինչև ուսումնական պարապմունքների ավարտը:

57. Որևէ կիսամյակում 2-11-րդ դասարաններում և 12-րդ դասարանի առաջին կիսամյակում 180-240 ժամ բացակայության դեպքում սովորողի, (բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողի) կիսամյակային գնահատականները չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից: Տվյալ կիսամյակի կիսամյակային գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն:

58. Ուսումնական տարվա ընթացքում 2-11-րդ դասարաններում 180-240 ժամ բացակայած սովորողի, (բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողի) բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն: Տարեկան գնահատականները որոշվում են երկու կիսամյակների գնահատականների հանրագումարների միջինացման արդյունքում:

59. 2-11-րդ դասարաններում 180-240 ժամ բացակայած սովորողները տվյալ ուսումնական տարվա բացակայությունների ամփոփումից մինչև ուսումնական պարապմունքների ավարտն ընկած ժամանակահատվածում լրացուցիչ քննություններ են հանձնում, (բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների), «Մայրենի», «Հայոց լեզու և հայ գրականություն», և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ՝ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից: «Ֆիզիկուլտուրա» առարկայից անցկացվում է ստուգարք:

60. 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 120-240 ժամ բացակայություն ունենալու դեպքում սովորողը լրացուցիչ քննություն է հանձնում այն առարկաներից, որոնք ընտրել է:

61. 2-8-րդ, 10-11-րդ, ինչպես նաև 19 տարին չլրացած 9-րդ դասարանների սովորողները 240 ժամից ավելի բացակայելու դեպքում չեն փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը, 9-րդ և 12-րդ դասարանների 19 տարին լրացած սովորողը դուրս է մնում Հաստատությունից:

62. Բոլոր դասարանների քննական և ստուգողական առաջադրանքները մշակվում են Հաստատության առարկայական մեթոդական միավորումների կողմից՝ առնվազն 3 տարբերակով: Դրանք հաստատվում են Հաստատության տնօրենի կողմից:

63. Հաստատության տնօրենը կազմում է սույն կարգի 59-րդ կետում նշված քննությունների ժամանակացույցը և տեղեկացնում Նախարարությանն ու շրջանի վարչակազմին (այսուհետ՝ լիազոր մարմին): Քննություններին կարող են մասնակցել Նախարարության և (կամ) լիազոր մարմնի ներկայացուցիչը (ներք):

64. Լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա նշանակվում են սովորողի տարեկան գնահատականները:

5. ՄԵՂԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

65. Մեղալի ներկայացվում է 9-րդ դասարանը հիմնական կրթության գերազանցության վկայականով ավարտած և 10-12-րդ դասարաններում բոլոր առարկաներից տարեկան, իսկ միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների նաև 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից 9 կամ 10 միավոր և (կամ) 18-20 միավոր գնահատված սովորողը:

66. Ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկայից չգնահատված սովորողը, որպես Մեղալի հավակնորդ, չի ներկայացվում, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը,

2) միջնակարգ կրթության երրորդ աստիճանում հոսքային ուսուցում իրականացնող կամ մասնագիտացված հանրակրթական Հաստատությունների բնագիտամաթեմատիկական և արհեստագործական հոսքերում ուսումնառության երեք տարիների ընթացքում «Հայոց եկեղեցու պատմություն», «Համաշխարհային պատմություն» առարկաների՝ ուսումնական պլաններով չնախատեսված լինելը,

3) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և Արցախի Հանրապետություն վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը,

4) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը:

67. Մեղալի հավակնորդ սովորողների նախնական անվանացանկերը առաջին կիսամյակն ամփոփելուց անմիջապես հետո Հաստատությունները ներկայացնում են շրջանի վարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնին, իսկ Նախարարության ենթակայության և ոչ պետական հանրակրթական Հաստատությունների սովորողների անվանացանկերը՝ Նախարարություն:

68. Մինչև ապրիլի 20-ը շրջանի վարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնիները, Ստեփանակերտի քաղաքապետարանը և Նախարարությունը Հաստատություններում ստուգում են ներկայացված փաստաթղթերի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

69. Մինչև մայիսի 10-ը շրջանի վարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնիները, Ստեփանակերտի քաղաքապետարանը ստուգված ցուցակները ներկայացնում են Նախարարություն՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը (հիմնական կրթության վկայականի պատճենը, քաղվածք մանկավարժական խորհրդի որոշումից, տեղեկանք սովորողի առաջադիմության մասին, տեղեկատվություն սովորողի՝ պետական ավարտական և միասնական քննությունների վերաբերյալ): Մեղալի հավակնորդների ներկայացված փաստաթղթերը Նախարարությունում կարող են կրկնակի ուսումնասիրվել:

6. ՄԵՂԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՂՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

70. Մեղալի հավակնորդ բոլոր սովորողները (անկախ Հաստատության ենթակայությունից և Հաստատությունում ուսուցման լեզվից), այդ թվում՝ սույն կարգի 66-րդ կետի 1-4 ենթակետերի հիմքով քննություններին մասնակցող սովորողները «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից որևէ մեկից (ընտրությամբ) պետական ավարտական քննությունները հանձնում են կենտրոնացված կարգով՝ Նախարարության կողմից նախապես որոշված՝ շրջանի (Ստեփանակերտ քաղաքի) որևէ Հաստատությունում՝ տվյալ քննության համար սահմանված օրերին:

71. Քննությունների նախապատրաստման համար պատասխանատու է քննական կենտրոնի ղեկավարը, ով ԳԹԿ-ի կողմից հաստատված քննական կենտրոնի ի պաշտոնե ղեկավարն է: Քննությունների ընթացքը և աշխատանքների ստուգումը վերահսկում են Նախարարության ներկայացուցիչները:

72. Առարկաները ոչ մրցութային լինելու դեպքում Մեդալի հավակնորդի համար հիմք է կենտրոնացված համակարգով հանձնված պետական քննական առարկայի գնահատականը:

73. Քննական աշխատանքները ստուգվում են Նախարարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ԳԹԿ-ի կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե Նախարարության ներկայացուցիչն է: Հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ: Քննական գրավոր աշխատանքները, մինչև դրանց ստուգման ավարտը, պահվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ:

74. Մեդալի հավակնորդ այն շրջանավարտները, որոնց համար «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաները համարվում են բուհական ընդունելության մրցութային քննություն, քննություն են հանձնում միասնական համակարգով (պետական ավարտական քննության միավորները հաշվարկվում են միասնական քննության ավարտական մասի գնահատականի հիման վրա):

75. «Ֆիզկուլտուրա» առարկայից ստուգարքը Մեդալի հավակնորդը հանձնում է իր Հաստատությունում:

76. Մեդալի հավակնորդ սովորողի, ինչպես նաև Հաստատության մյուս սովորողների համար քննական առաջադրանքները բովանդակությամբ ու կառուցվածքով նույնն են:

77. Մինչև հունիսի 25-ը Հաստատությունը շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժին է ներկայացնում տեղեկանք՝ Հաստատությունում «Ֆիզկուլտուրա» առարկայից ստուգարքի արդյունքների մասին: Ստացված արդյունքները ընդհանրացվում են շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժիններում և մինչև հունիսի 28-ը ներկայացվում Նախարարություն: Նախարարության ենթակայության Հաստատությունները սույն կետով նախատեսված տեղեկանքը նույն ժամկետում ներկայացնում են Նախարարություն:

78. Պետական ավարտական քննություններից 20 միավորային համակարգում՝ 18, 19, 20 կամ 10 միավորային համակարգում՝ 9, 10 միավոր ստացած և «Ֆիզկուլտուրա» առարկայից ստուգարք հանձնած Մեդալի հավակնորդները ստանում են «Գերազանցության» նշումով միջնակարգ կրթության ատեստատ և պարգևատրվում են Մեդալով:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2022 թվականի ապրիլի 1-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 8-Ն

ՀՐԱՄԱՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշները՝ «ԵՎՐՈՊԱ-2022» շարքից «Պատմություններ և առասպելներ» թեմայով երկու նամականիշ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Գործողության մեջ դնել՝ «Պատմություններ և առասպելներ» թեմատիկայով 2 նամականիշ՝ սահմանելով անվանագները՝ 500-ական ՀՀ դրամ, տպաքանակը՝ յուրաքանչյուրը՝ 7000 հատ:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**


Հ. ԽԱՆՈՒՄՅԱՆ

2022 թվականի ապրիլի 1
ք. Ստեփանակերտ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
2022 թվականի ապրիլի 1-ի N 8-Ն հրամանի



Հավելված N 2
Արցախի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
2022 թվականի ապրիլի 1-ի N 8-Ն հրամանի



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

05 ապրիլի 2022թ.

ՆՀ-75-Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 5-ի N 389-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. *Տրամադրել՝ ֆիզիկական անձ Մարտին Քաջիկի Մարտիրոսյանին* Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՆ00794 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Հայկ Խանումյան

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

2022 թվականի մարտի 25-ի

**ՈՐՄԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի
ԹԻՎ 52-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 16-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերն, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել որսի կանոնները՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել որսորդական վկայականի միասնական ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի «Որսի կանոնները հաստատելու մասին» թիվ 52-Ն հրամանը:
4. Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն հրամանը հասցնել աշխատակազմի ղեկավարին ու գործակալության և տեսչության պետերին:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Արցախի Հանրապետության
բնապահպանության կոմիտեի նախագահ**

Ֆ. Գաբրիելյան

2022 թվականի մարտի 25

ք. Ստեփանակերտ

ՈՐՄԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում են որսի՝ միջոցները, ժամկետները, օբյեկտ համարվող կենդանիների ցանկը, ինչպես նաև կենդանիների որսի սահմանային թույլատրելի չափաքանակները, որսի արգելված ձևերը, միջոցները, մեթոդները և գործիքները, որսի արգելված տարածքների ցանկը, օգտագործման հանձնված որսորդական տնտեսությունների և որսահանդակների ցանկը:

2. «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքի համապատասխան իրականացվում է՝ սիրողական որս, կենդանիների հայթայթում (որսորդություն, ձկնորսություն, հավաք) սպորտային, գեղագիտական հաճույքի ու անձնական կարիքների օգտագործման համար:

3. Արցախի Հանրապետությունում սիրողական որսն (այսուհետ՝ **որս**) իրականացվում է որսահանդակներում՝ որսի կենդանիների բնակության միջավայր հանդիսացող անտառային, դաշտային և ջրածածկ տարածքներում:

2. ՈՐՄԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում որսի իրավունք ունեն՝

1) 18 տարին լրացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր օրենքով սահմանված կարգով հանձնել են որսորդական միևնույն և օրենքով սահմանված կարգով ստացել են «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքի 19-րդ հոդվածում նշված՝ որս կատարելու անհրաժեշտ փաստաթղթեր,

2) օտարերկրյա այն քաղաքացիները, ովքեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք են բերել որսորդական զենք կրելու և որս իրականացնելու իրավունք:

5. Որսն իրականացվում է՝

- 1) որսորդական ողորկափող հրազենով,
- 2) ակոսավոր հրազենով (բացառությամբ ջրային տարածքների),
- 3) որսորդական սառը զենքով,
- 4) թիվ 5-ից ոչ խոշոր թակարդներով,
- 5) խայծերով,
- 6) խրտվիլակներով,
- 7) որսորդական շներով,
- 8) որսկան թռչուններով,
- 9) թաքստոցներից:

6. Որսից հետո որսորդը, իսկ որսորդական տնտեսություններում՝ որսահյիչը գրառում է յուրաքանչյուր օրվա փաստացի որսված կենդանիների տեսակը և քանակը որսի թույլտվության հակառակ կողմի վրա:

7. Որսահանդակներից դուրս, որսն ավարտելուց հետո կամ ընդմիջումներին, ինչպես նաև լիազորված անձի կողմից ստուգման ժամանակ հրազենը բերվում է լիցքաթափված վիճակի: Լիցքաթափված է համարվում այն հրազենը, որի փողում և պահունակում բացակայում է փամփուշտը:

8. Որսը համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության, չի կարող իրականացվել՝

- 1) առանց սույն կանոնների 4-րդ կետում նշված գործող փաստաթղթերի առկայության,
- 2) որսահանդակների տարածքներից դուրս,
- 3) բնության հատուկ պահպանվող տարածքներում, բացառությամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- 4) գյուղատնտեսական նշանակության հողերում, մինչև բերքահավաքի ավարտը,
- 5) սույն կանոնների 5-րդ կետով չնախատեսվող որսագործիքներ օգտագործելով,

6) բնակավայրերին, հանգստի գոտիներին և ավտոմայրուղիներին մոտ տարածքներում որսորդական ակոսավոր հրազենով, ոչ պակաս, քան 5000 մետր, իսկ ողորկափող հրազենով 500 մետր հեռավորությունից,

7) աղետալի վիճակում գտնվող (հյուծված, սառած, կամ բնական աղետներից փրկվող վայրի կենդանիների վրա,

8) վերգետնյա, օդային (ուղղաթիռ, ինքնաթիռ, պարաշյուտ և այլն) և ջրային մեխանիկական (մոտորացված) տրանսպորտային միջոցներից վայրի կենդանիներին հետապնդելով,

9) Բնության պահպանության միջազգային միության ցանկում գրանցված վտանգված և անհետացման եզրին գտնվող կենդանիների վրա (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի),

10) աղեղների, կեռչանների, ցանցերի, օղակների, ծուղակների, որսափոսերի և թիվ 5-ից խոշոր թակարդների օգտագործմամբ,

11) գիշերային ժամերին լուսարձակների կամ լուսային այլ հզոր սարքավորումների (աղբյուրների) կիրառմամբ,

12) ձայնարձակիչների կամ ձայն վերարտադրող էլեկտրոնային (ոչ մեխանիկական) սարքերի գործադրմամբ,

13) պայթուցիկ և քիմիական նյութերի (բացառությամբ հոտավետ խայծերի), գազերի և էլեկտրական հոսանքի գործադրմամբ,

14) բուսական ծածկի այրման և ծխի օգտագործման միջոցով,

15) կենդանիների բների և որջերի քանդման միջոցով,

16) որսի թույլտվության մեջ նշված չափաքանակներից ավել վայրի կենդանիների, թույլտվությունում չնշված վայրի կենդանիների տեսակների, թույլտվությունում նշված որսի ժամկետներից դուրս:

3. ՈՐՄԻ ՕԲՅԵՎՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԸ

9. Ըստ էկոլոգիական և տնտեսական նշանակության որսի կենդանիները տարանջատվում են՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքի ցանկում (այսուհետ՝ Կարմիր գիրք) գրանցված կաթնասունների և (կամ) թռչունների՝ ներառյալ արհեստական ճանապարհով բուծված, որոնց որսը թույլատրվում է օրենսդրությամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ որսի անվանական թույլտվությամբ,

2) հաղթանշանային արժեք ունեցող փոքրաքանակ կենդանիների, որոնց որսը թույլատրվում է խիստ սահմանափակ քանակներով որսորդական տնտեսությունների, որս իրականացնող կազմակերպությունների և անհատ որսորդների հայտերի հիման վրա՝ որսի անվանական թույլտվությամբ,

3) տարածված կենդանիների, որոնց որսը թույլատրվում է որսի թույլտվությամբ,

4) կենդանիների, որոնք իրենց կենսակերպով և վարքով մեծ վնաս են պատճառում որսի ռեսուրսին, կամ հանդիսանում են մարդու, ընտանի և վայրի կենդանիների վտանգավոր վարակիչ հիվանդությունների փոխանցողներ, կամ մեծ վնաս են պատճառում տնտեսական գործնեությանը, որոնց որսը որսաշրջանի ընթացքում թույլատրվում է որսահանդակում օրինական գտնվող որսորդներին՝ Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի կողմից տրված որսի թույլտվության մեջ առանց նշումի, իսկ որսաշրջանից դուրս՝ որսի անվանական թույլտվությամբ:

10. Որսի օբյեկտ են հանդիսանում հետևյալ կենդանիների տեսակները՝

Կաթնասուններ

Հնդկական վայրենակերպ	- գրանցված է Կարմիր գրքում
Ճահճակուղբ	- տարածված
Մշկամուկ	- տարածված
Ջրառնետ	- տարածված
Նապաստակ	- տարածված
Վայրի խոզ	- հաղթանշանային
Ազնվացեղ եղջերու	- հաղթանշանային
Այծյամ	- հաղթանշանային
Հայկական մուֆլոն	- գրանցված է Կարմիր գրքում
Բեզդարյան այծ	- գրանցված է Կարմիր գրքում
Աղվես	- տարածված
Գայլ	- որսի ռեսուրսին վնաս պատճառող

Շնագայլ
Անդրկովկասյան գորշ արջ
Կզաքիս
Խայտաքիս
Փոքրուղ
Ջրասամույր
Եղեգնակատու
Անտառային կատու
Մամուլ
Տափաստանային կատու
Լուսան
Ընձառյուծ (Հովազ)

- որսի ռեսուրսի վնաս պատճառով
- գրանցված է Կարմիր գրքում
- փոքրաքանակ
- գրանցված է Կարմիր գրքում
- փոքրաքանակ
- գրանցված է Կարմիր գրքում
- հաղթանշանային
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- հաղթանշանային
- հաղթանշանային
- գրանցված է Կարմիր գրքում

Թռչուններ

Քաջահավ
Տարզալակտուց
Սպիտակագլուխ բադ
Թշշան կարապ
Ճչան կարապ
Մոխրագույն սագ
Կարմիր բադ
Խայտաբադ
Մոխրագույն բադ
Շչան բադ
Կոնչան բադ
Լայնակտուց բադ
Նետապոչ բադ
Ճքճքան մրտիմն
Մուլոդ մրտիմն
Մարմարյա մրտիմն
Կարմրակտուց սուզաբադ
Կարմրագլուխ սուզաբադ
Փուփուլավոր սուզաբադ
Ծովային սուզաբադ
Մոնաբադ
Տուրպան
Ցանկում չնշված սագազգիներ
Կովկասյան մայրեհավ
Թուրաջ
Մոխրագույն կաքավ
Քարակաքավ
Լոբ
Անդրկովկասյան փասիան
Վայրի հնդկահավ
Փոքր արոս
Մեծ արոս
Գեղանի արոս
Եղեգնահավ
Սև փարփար
Կտցար կաչաղակ
Ոտնացուպիկ
Բզակտուց
Ճախրուկ
Կտցարազգիներ
Աղավնիներ
Դռլոն
Տնային ճնճղուկ
Մովորական սարյակ
Սև կեռնեխ
Մինակեռնեխ

- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- տարածված
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- տարածված
- տարածված
- գրանցված է Կարմիր գրքում
- տարածված
- տարածված
- տարածված
- գրանցված է Կարմիր գրքում
- տարածված
- տարածված
- տարածված
- փոքրաքանակ
- գրանցված է Կարմիր գրքում
- փոքրաքանակ
- փոքրաքանակ
- տարածված
- տարածված
- փոքրաքանակ
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- տարածված
- տարածված
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- գրանցված է Կարմիր գրքում
- տարածված
- տարածված
- փոքրաքանակ
- տարածված
- տարածված
- տարածված
- տարածված

Դաշտային արտույտ	- տարածված
Տափաստանային արտույտ	- տարածված
Կաչաղակ	- որսի ռեսուրսին վնաս պատճառող
Ագռավ	- որսի ռեսուրսին վնաս պատճառող

4. ՈՐՍԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

11. Արցախի Հանրապետությունում յուրաքանչյուր տարի որսի սեզոնը բացվում է օգոստոսի երրորդ շաբաթ օրը և փակվում հաջորդ տարվա մարտի 15-ին:

12. Կենդանիների որսի ժամկետները և սահմանային թույլատրելի չափաքանակները սահմանվում են որսի կենդանիների պոպուլյացիաների առավել արդյունավետ պահպանության, վերարտադրության և օգտագործման նպատակով:


13. Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահի հրամանով սահմանվում են՝ Արցախի Հանրապետության տարածքում որսի կենդանիների որսաշրջանի սիրողական որսի համար թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները, այնուհետև սահմանված կարգով հրապարակվում է առավելագույն տպաքանակ ունեցող զանգվածային լրատվական միջոցներով՝ որսաշրջանի բացումից ոչ ուշ քան 30 օր առաջ:

14. Արտակարգ իրավիճակների դեպքում (համաճարակներ, բնական աղետներ) Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահի հրամանով որսաշրջանի ընթացքում կարող են փոփոխվել որսի կենդանիների չափաքանակները և որսի ժամկետները:

15. Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեն իրավասու է որսի սեզոնից դուրս որսի թույլտվություններ տալու՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների համար:

ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՁԵՎ

1. Վկայականի սկզբնամաս:

	
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ N _____	
Ն. Տ.	Ազգանուն _____
	Անուն _____
	Հայրանուն _____
	Ծնված « ____ » _____ թ.
	Կ. Տ. _____ (ստորագրությունը)

2. Վկայականի հետևի մաս:

Վկայականը տրված է ԱՀ բնապահպանության կոմիտեի կողմից	
« ____ » _____ թ.	
Վկայականը ուժի մեջ է մինչև 20 թ. _____ -ը ներառյալ	
_____ (քաղաքացիությունը, անձը հաստատող փաստաթղթի համարը)	
Հանձնաժողովի նախագահ	_____
	(ստորագրությունը) (անուն, ազգանունը)
	Կ. Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/1353/02/20
Քաղաքացիական գործ ԸԻԴ/1353/02/20
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Ն. Գրիգորյան
 Կ.Սաղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

4-ին ապրիլի 2022թ.

ԱՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝
մասնակցությամբ՝ դատավորներ

Ն.Նարիմանյանի
Ա.Աբրահամյանի
Հ.Աբրահամյանի
Հ.Խաչատրյանի
Ի.Կարապետյանի

գրավոր ընթացակարգով քննարկելով ըստ հայցի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության ընդդեմ Միրա Մելրոդի Ջհանգիրյանի և Արարատ Սուրխայի Սարգսյանի՝ 1.581.986 /մեկ միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր ութսունվեց/ ՀՀ դրամ և տոկոսները բռնագանձելու պահանջի մասին ԸԻԴ/1353/02/20 քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 20-ի որոշման դեմ հայցվորի ներկայացուցիչ Փիրուզա Վարդանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպությունը /այսուհետ, նաև՝ Հայցվոր/ ներկայացուցիչ Ելենա Կարապետյանի միջոցով, Միրա Մելրոդի Ջհանգիրյանի և Արարատ Սուրխայի Սարգսյանի /այսուհետ՝ նաև Պատասխանողներ/ դեմ 2020 թվականի հունիսի 9-ին հայցադիմում է ներկայացրել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ, նաև՝ Դատարան/ համապարտության կարգով 1.581.986 /մեկ միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր ութսունվեց/ ՀՀ դրամ գումար և դրա նկատմամբ, հայցադիմումը դատարան ներկայացնելու հաջորդ օրվանից մինչև պարտավորության դադարման օրը, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները բռնագանձելու պահանջներով:

Դատարանի /դատավոր՝ Ն.Առաքելյան/ 2020 թվականի հունիսի 10-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության 2020 թվականի հուլիսի 22-ին:

Դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ քաղաքացիական գործով նշանակվել է դատաավտոտեխնիկական փորձաքննություն և դրա կատարումը հանձնարարվել «ԱՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ին:

Դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

«ԱՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ տնօրենը 2020 թվականի դեկտեմբերի 17-ին ԸԲԴ/1353/02/20 քաղաքացիական գործն ուղարկել է Դատարան՝ նշելով, որ ԴՓԼ-ում համապատասխան տեսակի փորձաքննություն չի իրականացվում՝ համապատասխան որակավորմամբ փորձագետի բացակայության պատճառով:

2021 թվականի հունվարի 13-ին քաղաքացիական գործը հանձնվել է դատավոր Մ.Ստեփանյանին:

Դատարանի 2021 թվականի հունվարի 15-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և գործի վարույթը վերսկսվել:

Դատարանի 2021 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ ԸԲԴ/1353/02/20 քաղաքացիական գործով Դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ նշանակված դատավոր Գևորգյանի կողմից փորձաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին և գործի վարույթը կասեցվել է:

2021 թվականի հունիսի 7-ին Դատարան է մուտք գործել ՀՄ՝ 21-0040Բ փորձաքննության եզրակացությունը:

Դատարանի 2021 թվականի հունիսի 10-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և գործը նշանակվել դատաքննության 2021 թվականի օգոստոսի 23-ին Ասկերան քաղաքում:

Դատարանի 2021 թվականի նոյեմբերի 26-ի վճռով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության հայցը բավարարվել է մասնակի: Վճռվել է Արարատ Մուրխայի Սարգսյանից և Միրա Մելրոդի Ջհանգիրյանից համապարտ հոգուտ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության գանձել 806.310 /ուր՝ հարյուր վեց հազար երեք հարյուր տասը/ ՀՀ դրամ, որից 750.000 /յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը՝ որպես պատճառված վնասի հատուցման գումար, 18.000 /տասնութ հազար/ ՀՀ դրամը՝ որպես ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսագումար, 22.500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապահովագրական ընկերության գործավարման ծախսի հատուցման գումար և 15.810 /տասնհինգ հազար ութ հարյուր տասը/ ՀՀ դրամը՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

Միաժամանակ վճռվել է 750.000 /յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ չվճարված գումարի նկատմամբ 2020 թվականի հունիսի 10-ից մինչև պարտավորության դադարման օրը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկել տոկոս և համապարտ գանձել Արարատ Մուրխայի Սարգսյանից և Միրա Մելրոդի Ջհանգիրյանից հոգուտ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության: Հայցը՝ 791.486 /յոթ հարյուր իննսունմեկ հազար չորս հարյուր ութսունվեց/ ՀՀ դրամ գանձելու մասով մերժվել է:

Նշված վճռի դեմ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Փիրուզա Հովհիսի Վարդանյանը 2022 թվականի հունվարի 4-ին, փոստային ծառայությանը հանձնելու եղանակով, ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով մասնակի բեկանել բողոքարկվող վճիռը և այն փոփոխել՝ կայացնելով նոր դատական ակտ:

ԱՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ, նաև Վերաքննիչ դատարան/ 2022 թվականի հունվարի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2022 թվականի փետրվարի 14-ին հայցվորի ներկայացուցիչ Փիրուզա Վարդանյանը փոստային ծառայությանն է հանձնել վճռաբեկ բողոքը, որը մուտք է գործել Գերագույն դատարան 2022 թվականի փետրվարի 23-ին:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքը պետք է ընդունվի վարույթ, քանի որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԱՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» /այսուհետ՝ նաև Կոնվենցիայի/ 6-րդ հոդվածի 1-ին մասը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 70-րդ, 73-րդ, 115-րդ, 129-րդ, 223-րդ հոդվածները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանն իր կամայական որոշմամբ խախտել է Հայցվորի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները, դրանով իսկ լրացուցիչ ծանրաբեռնելով Հայցվորին: Վերաքննիչ դատարանի որոշումը չի բխում օրենքի պահանջներից, այն կրում է կամայական բնույթ, քանի որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել և մեկնաբանել օրենքի դրույթները, ինչի արդյունքում հանգել է սխալ եզրահանգման ու, իր «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ, խախտել է ԱՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքները:

Բողոքաբերը նշում է, որ Դատարանը դատական ակտի հրապարակման օրը փոփոխել և տեղափոխել է 26.11.2021թ., սակայն Հայցվորը դատական ակտի հրապարակման օրվա և ժամի փոփոխության մասին որևէ ծանուցում չի ստացել, իսկ 26.11.2021թ. հրապարակված վճիռը փոստային ծառայությանն է հանձնվել 30.11.2021 թվականին, ու Հայցվորը, փոստային ծառայության միջոցով, վճիռը ստացել է 04.12.2021 թվականին /փաստացի 07.12.2021թ./, իսկ վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնել 04.01.2022թ.:

Ըստ բողոքի հեղինակի՝ ակնհայտ է, որ Դատարանը վճիռի հրապարակման օրը փոփոխել է առանց նախապես Հայցվորին տեղյակ պահելու, և այդ պատճառով Հայցվորը չէր կարող հրապարակման օրը ստանալ վճիռը, իսկ Դատարանը այն ուղարկել է հրապարակման օրվանից չորս օր հետո, այսինքն՝ Դատարանը այն ուղարկել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասի խախտմամբ, և Հայցվորն այն ստացել է միայն հրապարակման օրվանից ութ օր հետո:

Վերաքննիչ դատարանը՝ ի պաշտոնե /ex officio/, անկախ ներկայացված ապացույցներից, տվյալ դեպքում ծրարից, պարտավոր էր պարզել արդյո՞ք դատական ակտի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկվել է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ այն առձեռն չի հանձնվել նրանց, մինչդեռ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը ուղղակի արել է ենթադրություններ, կատարել հաշվարկներ, թե ուղարկելու դեպքում քանի օր ուներ Հայցվորը վերաքննիչ բողոք ներկայացնելու համար, չպարզելով գործի համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը, և անհիմն մերժել վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունը:

Բողոքաբերը սույն գործի փաստերից հանգում է այն հետևության, որ դատական ակտի հրապարակման օրվա և ժամի փոփոխության մասին Հայցվորը պատշաճ չի ծանուցվել, Դատարանը 26.11.2021թ. հրապարակված դատական ակտն առնվազն հաջորդ օրը չի ուղարկել Հայցվորին և Հայցվորին օրենքով սահմանված ժամկետում հասանելի չի եղել դատական ակտն ամբողջական տարբերակով, ուստի Հայցվորը կարող էր վերաքննիչ բողոք ներկայացնել նույնիսկ 10.01.22 թվականին ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վերացնել ԸԴՆ/1353/02/20 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 20.01.2022թ. որոշումը:

3. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ, 241-րդ հոդվածներով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանը խախտել է Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ, 63-րդ, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ, 115-րդ և 223-րդ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածները, որն ազդել է գործի ելքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ... ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքը մարդու՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովելուն ուղղված միջազգային և ներպետական նորմերով ամրագրված և երաշխավորվող սուբյեկտիվ դատավարական իրավունքների համակցություն է, որը յուրաքանչյուրին ապահովում է օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարան՝ առանց խոչընդոտի, դիմելը, երաշխավորում է գործի քննությունը հրապարակայնության, կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում իրականացվելը, ապահովում է հիմնավորված դատական ակտ ստանալը, ինչպես նաև երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքի խախտմանը հանգեցնող արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ իրավունքի խախտման վերացման հնարավորությունը:

Դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նախ և առաջ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը, իսկ մյուս կողմից՝ դատարանի պարտականությունը՝ քննելու գործը և նրանով կայացնելու օրինական և հիմնավորված որոշում: Խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան: Ընդ որում՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցները դատարան են դիմում հայցադիմում ներկայացնելու միջոցով: Հետևաբար, դատարան դիմելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա:

Գերագույն դատարանը փաստում է, որ Արցախի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների փաստացի իրականացմանը:

Այս համատեքստում, Գերագույն դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի /այսուհետ՝ նաև ՄԻԵԴ/ նախադեպային իրավակարգավորումների համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է:

Միաժամանակ, Գերագույն դատարանը հարկ է համարում շեշտել, որ մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Օրենսդրորեն սահմանված ժամկետային սահմանափակումները հետապնդում են որոշակի կարևոր նպատակ, այն է՝ իրավական որոշակիության երաշխավորումը կոնվենցիոն և սահմանադրաիրավական կարգավորումների պատշաճ և բազմակողմանի իրագործման նպատակով: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ գրկի անձին արդար դատաքննության իրավունքից այնպես, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը:

Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ հետևանք և եթե բացակայում է ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև ողջամիտ հարաբերակցությունը՝ համաչափության առումով:

Այնուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև բացակայում է համաչափության ողջամիտ հարաբերակցությունը:

Գերագույն դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական կարգավորումների լույսի ներքո պետք է մեկնաբանել նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ և 223-րդ հոդվածները:

Նույն օրենսգրքի 217-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Նշված նորմերից հետևում է, որ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ:

Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

- 1/ չեն պահպանվել սույն օրենսգրքի 220-րդ հոդվածի պահանջները.
- 2/ վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը.
- 3/ մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին.
- 4/ բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի.
- 5/ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման.
- 6/ գործին մասնակցող անձանց միջև առկա է վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, և նման համաձայնություն կնքած մյուս կողմը չի համաձայնվել գործը վերաքննիչ դատարանում քննելու վերաբերյալ:

Գերագույն դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է բողոքարկման դատավարական ժամկետը բաց թողնելու իրավական

հետևանքներին /մասնավորապես, տես՝ ըստ հայցի Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության ընդդեմ «Հ.Է.Կ.ՇԲՆ» փակ բաժնետիրական ընկերության պարտապանին սնանկ ճանաչելու պահանջի վերաբերյալ ԸԻԴ/0006/04/20 սնանկության գործով Գերագույն դատարանի 2020թ. հուլիսի 3-ի որոշումը/:

Գերագույն դատարանը շեշտում է, որ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու հիմքերն օրենսդրի կողմից սպառիչ կերպով նշված չեն, ինչից հետևում է, որ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական գործառույթը թողնված է դատարանների հայեցողությանը:

Գերագույն դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանի վճիռը ժամանակին անձին չհանձնելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով բողոքում բարձրացված հարցը և սույն գործի փաստերի առանձնահատկությունները՝ Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում կրկին անդրադառնալ վերոնշյալ իրավական խնդրին:

Գերագույն դատարանը գտնում է, որ Դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքը Դատարանին պարտավորեցնում է վճռի հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում՝ հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, մերժելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության ներկայացուցչի միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին, և վերադարձնելով վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանել է, որ գործով ներկայացված միջնորդությամբ կողմը հայտնել է, որ Դատարանի 26.11.2021թ. վճիռը ստացել է 04.12.2021թ., սակայն չի կցել նշված փաստը հավաստող ապացույց: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը արձանագրել է, որ անգամ վճիռը 04.12.2021թ. ստանալու պարագայում մինչև 03.01.2022թ. վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում բողոքարկման բաց թողնված ժամկետը ենթակա կլիներ վերականգնման իրավունքի ուժով /ex jure/: Մինչդեռ, բողոքը ներկայացվել է 04.01.2022թ., այսինքն՝ վճիռը ստանալու պահից դրան ծանոթանալու 29-օրյա ժամկետն անցնելուց հետո: Ընդ որում, վերաքննիչ բողոքը 29-օրյա ժամկետն անցնելուց հետո ներկայացնելու որևէ օբյեկտիվ պատճառ հայցվոր կողմը չի ներկայացրել, այսինքն՝ չի հիմնավորել 03.01.2021 թվականից հետո բողոքարկման ժամկետի բացթողման հարգելի լինելը:

Մինչդեռ, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի վճիռը հրապարակվել է 26.11.2021 թվականին, այն հայցվոր կողմը ստացել է 04.12.2021 թվականին, իսկ Դատարանի կողմից վճիռը հայցվոր կողմին հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկելու վերաբերյալ որևէ ապացույց սույն գործում առկա չէ:

Ինչ վերաբերում է հայցվոր կողմին հասցեագրված Դատարանի վճիռն

ուղարկելու վերաբերյալ 26.11.2021 թվականին թվագրված գրությանը, ապա այդ մասով Գերագույն դատարանն արձանագրում է, որ նշված գրությունը չի կարող դիտվել որպես Դատարանի վճիռը դրա հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկելու վերաբերյալ ապացույց: Ավելին, վճռաբեկ բողոքին կցված ծրարի զննությամբ պարզվել է, որ այն փոստային ծառայությանն է հաձնվել 30.11.2021 թվականին:

Նման պայմաններում Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով հայցվոր կողմին ուղարկելու իմպերատիվ պահանջը, ինչի արդյունքում վերջինս զրկվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքից:

Բացի այդ, Գերագույն դատարանը փաստում է, որ համաձայն «Տոների և հիշատակի օրերի մասին» ԼՂՀ օրենքի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2022թ. հունվարի 7-ը եղել են ոչ աշխատանքային օրեր, ուստի Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ հայցվոր կողմը չի հիմնավորել 03.01.2021 թվականից հետո բողոքարկման ժամկետի բացթողնման հարգելի լինելը, անհիմն է, հետևաբար Վերաքննիչ դատարանի որոշումը՝ վերաքննիչ բողոք բերելու դատավարական ժամկետի բաց թողնումը հարգելի համարելու և վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու մասին, հիմնավոր չէ և չի բխում սույն գործի փաստական տվյալներից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով վերաքննիչ բողոքը, խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասը, 115-րդ հոդվածի 4-րդ մասը, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, քանի որ, անտեսելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները, հաստատված է համարել բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետի առանց հարգելի պատճառների խախտման փաստը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի և 253-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու ու նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասով, 254-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԸԲԴ/1353/02/20 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 20-ի որոշման դեմ հայցվոր «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Փիրուզա Հովհիկի Վարդանյանի վճռաբեկ բողոքը բավարարել:

Վերացնել ԱՀ վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 20-ի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

